


2023

ሀክቀረ



አዲስ አበባ ዩኒቨርሲቲ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻ



ԵՓՐԵՄ ԵՒ ՄԱՐԹԱ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃ

(Հիմնուած 1923-ին)

«ՍԻՓԱՆ»

ՏԱՐԵԳԻՐԸ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ
ԿԱՆՈՆԱԼՈՐԱՔԱՐ ԵՐԱ ԿՐ ԵՆԵՆԵ 1959-ԷՆ Ի ՎԵՐ
(ՆԱԽԱԿԵՆ ԿԱՐԵՐԱՔԱՐ ԵՐԱ ԵՆԵՆԵ Է ՄԵՐԵՆԱԳԻՐ՝ 1940-ԷՆ, ԻՍԿ ԵՍԿԱԳԻՐ՝ 1954-ԷՆ)

Պատասխանատու խմբագիր՝
Կողքի ձեւաւորում

Հրատարակութիւն՝
Էջադրում

Թողարկում

ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՆԵՆԵԱՆ
ՊՐ. ՎԱՉԳԵՆ ՄՈՒՐԱՆԵԱՆ
ԵՆ ՕՐԴ. ՀՈՒՐԻ ԶԵՍՏԵՆԵԱՆ

ՄԱՀԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԱԿ
ՏԻԿ. ԱՆԱՀԻՏ ՊԱՍԵՐ

ՊԵՅՐՈՒԹ, ՄԱՐՏ 2024, ԱՌՅԱՆՑ



Պահպանելով աւանդոյթը, լոյս կ'ընծայենք մեր տարուան մը աշխատանքները ամփոփող «Սիփան» տարեգիրքը: Ամփոփող բառը այստեղ բառացի նշանակութիւն ունի, քանի որ այնտեղ իսկապէս զետեղուած են ընտրովի նիւթեր. հաղորդակցութեան միջոցներու արդիականութիւնը նպաստեց, որ դպրոցին գործունէութիւնները օրը-օրին հրապարակուին Ֆէյսպուքի, Ինսթակքրամի եւ դպրոցի կայքին ընդմէջէն, ի յաւելումն երեք «Լրատու»-ներուն, որոնք նոյնպէս առջանց կը տարածուին:

Վերի պարբերութեան նաեւ երկրորդ բառը՝ աւանդոյթ, ինքնանպատակ չէ: Հաստատութիւններու յարատեւումին գրաւականներէն մին աւանդականին ու նորարականին ներդաշնակ համատեղումն է: Ի վերջոյ աւանդութիւնը նաեւ պատմութիւն է, որ է խարիսխ: Նորարականը այդ խարիսխին յենող յառաջընթաց է. առանց մէկուն միւսը չ'ըլլար:

ՀԱԳ այս տարի տօնեց իր հարիւրամեակը: Տօնակատարութիւնները վերի գաղափարին շեշտադրումը եղան. արժանին մատուցել հարուստ պատմութեան մը եւ զայն գործածել իբրեւ ցատկահարթակ (diving board) ընթանալու դէպի ապագան:

Առանց անցեալի (իմա՝ աւանդոյթի) ապագան խախտու է, իսկ առանց ապագայի (իմա՝ նորարարութեան) անցեալը յիշատակ է:

Մենք կ'աշխատինք, որ անցեալը ըլլայ հիմք, ոչ՝ յիշատակ:

Ա. Խրիստիան



ԴԱՐԱԴԱՐՁԸ՝ ԻՆՔՆԱՎՍՏԱՅ ԽՈՆԱՐՅՆԵՐՈՒՆ ԺԱՌԱՆԳԸ



ՎԵՐ. ԺԻՐԱՅՐ ՂԱԶԱՐԵԱՆ
Հովիւ՝ Հայ աւետարանական
Ա. Եկեղեցիի

Հակառակ Լիբանանի քաղաքական, տնտեսական ու ընկերային ծանր պայմաններուն, խանդավառ տարեշրջանի մը մէջ հարիւրաւոր շրջանաւարտներու եւ բարեկամներու հետ տօնեցինք Հայ աւետ. գոլէճի հարիւրամեայ առաքելութիւնը, որ կը յատկանշուի աստուածատու կրթութեամբ ու հայ ազգին ծառայութեան համար՝ քրիստոսաշունչ յանձնառութեամբ:

Քրիստոնեայ Եկեղեցին եւ անոր ներշնչումով ծնունդ առած բոլոր կառոյցները՝ միութիւններ ու կրթական հաստատութիւններ, կը վայելեն Յիսուս Քրիստոսի եւ Անոր առաքելներուն ու հաւատարիմ հետեւորդներուն խոնարհ զոհողութեան արգասիքը, որ դպրոցներուն մէջ ի յայտ կու գայ կրթութեամբ ու հաւատոյ ուսուցմունքի փոխանցումով: Հայ աւետ Ա. Եկեղեցին յստակ տեսիլքով կարեւորագոյն առաքելութեան վայր կը սեպէ Հայ աւետարանական գոլէճը:

Եթէ Քրիստոնէական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը պարպեց Եկեղեցոյ գանձանակը, միւս կողմէ սակայն լեցուց հայ զաւակին միտքն ու հոգին: Այստեղ կրթութիւն ստացած շրջանաւարտներ եւ նախկին ու ներկայ աշակերտներ առանձնաշնորհեալ առիթը տուին ու դեռ կու տան մեզի, որ մէկ դար տեւողութեամբ ծառայենք Աստուծոյ: Հիմա ալ, երախտապարտ շրջանաւարտներ, կը շարունակեն վստահիլ մեզի, ոչ միայն որովհետեւ մենք շատ լաւ կրթութիւն կը ջամբենք, այլեւ քանի որ իրենք ալ իրենց սորվածը գործադրեցին եւ եղան յաջողակ, խելամիտ ու պատասխանատու անձնաւորութիւններ:

Մենք այս օրը տեսանք որովհետեւ պահեցինք հաւատքը ու հաւատացինք, որ այս դպրոցը Հայ է, Աւետարանական է (Աւետարանով գօտեպնդուած) ու Գոլէճ է: Մեր նախնիներուն յիշատակը վերածեցինք կրթութեան հիմքի ու այս բոլորը՝ ինքնավստահ խոնարհութեամբ:

«Եւ այս խօսքերը որոնք ես այսօր քեզի պատուիրեցի, քու սրտիդ մէջ թող ըլլան, ու զանոնք քու որդիներուդ կրկին անգամ սորվեցուր: Թէ՛ տանդ մէջ նստած ատենդ, թէ՛ ճամբայ քալած ատենդ եւ թէ՛ պառկելու ու ելլելու ատենդ՝ անոնց մասին խօսիր» (Բ. Օրինաց 6.6-7):





3 աւիտենական փառք Աստուծոյ, որ հարիւրամեակի մեր ծրագրած բոլոր ձեռնարկներն ալ պսակուեցան կատարեալ յաջողութեամբ եւ վկան դարձանք Աստուծոյ սիրոյն ու մեր բարեկամներու քաջալերանքին:

Նախապատրաստական աշխատանքներ

2023 տարին հոգաբարձութեան կողմէ հռչակուեցաւ յոբելենական տարի: Տարեշրջանի սկիզբը հաստատուեցաւ հարիւրամեակի գրասենեակ, որ վարեց տնօրէնը, օգնական ունենալով օրդ. Մարինէ Շէհիրեանը (2014-ի շրջ):

ՊԵՅՐՈՒԹ

Շրջանաւարտից հաւաք

4 Նոյեմբեր 2022


Յոբելենական գործունէութիւնները սկսան 4 Նոյեմբեր 2022-ին, երբ տեղի ունեցաւ շրջանաւարտից հաւաք: Հակառակ շատ անբարենպաստ եղանակին հարիւր աւելի շրջանաւարտներ ընդառաջած էին հրաւերին: Տնօրէնին բարի գալուստի խօսքէն ետք պրն. Ներսէս Պաղտոյեան ներկայացուց յոբելենական ծրագիրը, ապա ողջոյնի խօսք ուղղեց դոկտ. Զաւէն Մսրըլեան: Հաւաքը սփռուեցաւ տեղոյն վրայ Ֆեյսպուքի միջոցով:



Գոհարանական պաշտամունք

5 Փետրուար 2023

5 Փետրուար 2023-ին տեղի ունեցաւ իր տեսակին մէջ եզակի գոհարանական պաշտամունք մը Հայ աւետարանական Ա. եկեղեցիին մէջ: Եկեղեցին լեփ-լեցուն էր շրջանաւարտներով, պաշտօնական հիւրերով, բարեկամներով, համայնքի անդամներով, ծնողներով, ուսուցիչներով եւ աշակերտներով: Ներկայ եղան ՄԱՀԱԵՄ պատ. նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Լիբանանի հայ առաքելական թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեան, Սուրիոյ հայ աւետ. համայնքապետ վեր. Դոկտ. Յարութ Սելիմեան: Պաշտամունքին մաս կազմեցին հովիւր, հոգաբարձութեան ատենապետը, տնօրէնը, վերապատուելիներ Հայտօսթեանը եւ Պազալեանը (ԱՀԱԸ-ի կողմէ): Վեց հոգեւոր երգերու ընկերակցութիւնը կատարեց Պէյրութի սիմֆոնիք նուագախումբը, ղեկավարութեամբ Կարօ Աւեսեանի (1998 շրջ.), որ մշակած էր նաեւ երգերուն նուագները: Ելոյթ ունեցաւ նաեւ աշակերտներէ կազմուած երգեցիկ խումբը, երգելով «Սուրբերուն աչքերը» երգը:



Աշակերտական գործունեություններ 5 Մայիս 2023

5 Մայիսին աշակերտներ եւ ուսուցիչներ շուրջօրեայ գործունեություններով (պաշտամունք, քննարկումներ, մրցոյթներ, խաղեր, ձեռային աշխատանքներ) նշեցին իրենց սիրելի դպրոցին տարեդարձը: Մրցանակակիր աշակերտներ կարգացին դպրոցին մասին իրենց գրած շարադրությունները եւ ստացան մրցանակներ: Յիշարժան եւ խանդավառ օր մըն էր, ուր թէ՛ դպրոցին մասին զարգացման մրցում, թէ՛ պաշտամունք ու խորհրդածություններ, եւ թէ՛ ժամանց, ծառայեցին փառք տալու եւ ուրախանալու Հայ աւետարանական գոլէճին համար:



«Յարգանքի եւ երախտիքի սրահ»-ի բացում եւ շնորհանդէս

6 Յունիս 2023

6 Յունիսին տեղի ունեցաւ «Յարգանքի եւ երախտիքի սրահ»-ի բացումը եւ դոկտ. Զաւէն Մսրըլեանի «Ապրող էջեր անցեալէն» գիրքի շնորհանդէսը: Ան յուշագրութիւն մըն է, հեղինակին մանկութենէն մինչեւ չափահասութիւնը, անձնական, դպրոցական, միութենական, պատմաբանական եւ մանկավարժական հարուստ փորձառութիւններէ յիշարժան դրուագներու ոգեկոչումով: Ելոյթ ունեցան տնօրէնը, պրն. Պարոյր Աղպաշեանը, որ ներկայացուց գիրքը, ինչպէս նաեւ դոկտ. Մսրըլեանը: Ներկայ էին մեծ թիւով հանդիսականներ, ընդ որում պետ. Երեսփոխան Յակոբ Բագրատունի, նախկին նախարար Վարդինէ Օհանեան, նախկին երեսփոխան Նուրիճան Տեմիրճեան, ինչպէս նաեւ համայնքային կառոյցներու ներկայացուցիչներ, շրջանաւարտներ, բարեկամներ, ծնողներ, ուսուցիչներ եւ աշակերտներ: Սրահին բացումը կատարեցին Ծաղիկ եւ 12-րդ դասարանի երկուքական աշակերտներ: Աւարտին դոկտ. Մսրըլեան մակագրեց գիրքը: Այդ առթիւ ներկաներուն տրուեցան նաեւ 100-ամեակի հրատարակություններէն դպրոցի հիմնադիր տնօրէն Պետրոս Քարծայրի մասին պատմող ժողովածուն եւ դոկտ. Յուսիկ Տօնապետեանի հեղինակած «Հայ աւետարանական գոլէճ» ուսումնասիրությունը: Երեք գիրքերն ալ խմբագրած էր տնօրէն Ա. Իւրնէշլեանը:





Կալա-ճաշկերոյթ

10 Յունիս 2023

10 Յունիսին Kempinski-Summerland պանդոկին մէջ տեղի ունեցաւ հարիւրամեակի կալա-ճաշկերոյթը, նախագահութեամբ դպրոցի երկարամեայ բարերար տիար Ռաֆֆի Մանուկեանի, որ այս առթիւ տաս տարուայ վրայ երկարող մէկ միլիոն տոլարի օժանդակութեան խոստում կատարեց: Ծաշկերոյթին ելոյթ ունեցան ԱՀԱԸ-ի նախագահ դոկտ. Նազարէթ Տարաքճեան եւ հոգաբարձութեան ատենապետը: Առ ի երախտագիտութիւն Աւետարանչականին եւ պր. Մանուկեանին, ի դիմաց դպրոցին անոնց յանձնուեցաւ 100-ամեակի յուշատախտակը, զոր պր. Մանուկեան փոխանցեց դոկտ. Մարութեանին: Ծաշկերոյթի հանդիսավարներն էին Մարինէ Շեհիրեան եւ Ռէա Էքմէքճի: Ծաշկերոյթի յանձնախումբը կը բաղկանար տնօրէնէն, օրհորդներ Շեհիրեանէ, Էքմէքճիէ, Հոյրի Քեստենեանէ եւ պրն. Եղիկ Թորոսեանէ:



Առ ի երախտագիտութիւն



Կարելի չէ եզրափակել Հայ աւետարանական գոլէճի 100-ամեակի հանդիսութիւնները առանց յիշելու եւ գնահատելու շրջանաւարտներու եւ բարեկամներու այն հսկայ փաղանգը որուն նիւթաբարոյական աջակցութեան շնորհիւ դպրոցը կը գոյատեւէ եւ իր ներդրումը կ'ունենայ Լիբանանի հայ մատղաշ սերունդի դաստիարակութեան մէջ: Այս փաղանգին մէջ իրենց իւրայատուկ տեղը ունին Գոլէճի տարիներու բարերար պրն. Ռաֆֆի Մանուկեանը եւ պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարութեանը:

Պրն. Մանուկեանի մէկ միլիոն տոլարի աննախադէպ նուիրատութիւնը նոր շունչ տուաւ դպրոցին եւ մեծ խթան հանդիսացաւ անոր յարատեւման:

Իսկ ինչ կրնանք ըսել դոկտ. Մարութեանին մասին. կը բաւէ յիշատակել պրն. Մանուկեանի հակիրճ խօսքը դպրոցի 100-ամեակի ճաշկերոյթի ընթացքին, երբ ան բարձր գնահատեց դոկտ. Մարութեանի մտերմութիւնը եւ բարոյական նեցուկը իրեն, եւ առ ի երախտագիտութիւն անոր յանձնեց իր ստացած յուշանուէրը եւ դոկտ. Մարութեանին զիջեցաւ 100-ամեակի կարկանդակը հատելու պատիւը: Դոկտ. Մարութեան եղած է, է եւ կը մնայ Հայ աւետարանական գոլէճի սիրներէն մէկը. անոր ներդրումը դպրոցի յարատեւման մէջ անգնահատելի է, որուն համար մենք երախտապարտ կը մնանք միշտ:

ՀԱԳ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ



Յոբելեական հանդիսություն

11 Յունիս 2023

11 Յունիսին Հայ աւետարանական առաջին եկեղեցիին մէջ կայացաւ յոբելեական հիմնական հանդիսութիւնը՝ ՄԱՀԱԵՄ նախագահի տեղապահ վեր. դոկտ. Փօլ Հայտօթեանի, Շահէ արք. Փանոսեանի, Երեսփոխան Ժան Թալուզեանի եւ պաշտօնական այլ հիւրերու, տարբեր երկիրներէ ժամանած շրջանաւարտներու եւ հիւրերու, բարեկամներու եւ դպրոցի լայն շրջանակը բաղկացնող մարդոց ներկայութեամբ: Եկեղեցիին երկու յարկերը լեցուն էին: Պաշտօնական բաժինին մաս կազմեցին հովիւր՝ աղօթքով եւ ողջոյնի խօսքով, իսկ տնօրէնը ուղղեց հանդիսութեան հիմնական պատգամը: ԱՀԱԸ-ի ողջոյնի եւ զօրակցութեան խօսքը ներկայացուց արն. Զաւէն Խանճեան: Գեղարուեստական բաժինը ստանձնած էր կրկին Պէյրութի սիմֆոնիք նուագախումբը: Խմբավար Կարօ Աւեսեանի ղեկավարած խումբը 11 միջազգային, հայկական, լիբանանեան եւ հոգետր կտորներու ընդմէջէն ներկայացուց ՀԱԳ-ի պատմութիւնը. Երաժշտական կտորներուն կը նախորդէր խօսքի կարճ հատուած մը, ուր վեր կ'առնուէին տուեալ իրադարձութեան յատկութիւնները: Ընթերցումները կատարեցին շրջանաւարտ Քաթրինա Տումանեան եւ 12-րդ դասարանի աշակերտ Հրակ Մամիկոնեան:




Հրատարակութիւններ

Հարիւրամեակի մատենաշարով լոյս տեսաւ դոկտ. Մաքրլեանի «Ապրող էջեր անցեալէն» գիրքը, ինչպէս նաեւ ՀԱԳ-ի հիմնումի մասին պատմող դոկտ. Յուսիկ Տօնապետեանի եւ Պետրոս Քարծայրի նուիրուած գրքոյկներ: (Իւրաքանչիւրէն 400-ական օրինակ՝ Լիբանանի եւ ԱՄՆ-ի համար): Գոհաբանական պաշտամունքին եւ յոբելեական ձեռնարկին առիթով լոյս տեսան բովանդակալից յայտագիրներ: Սկսաւ գործել դպրոցի պլոկը, ուր մինչեւ Յուլիսի աւարտը տեղադրուեցան դպրոցին մասին 12 բանախօսութիւններ, յղուածներ, յուշեր եւ վկայութիւններ (<https://aec100years.wordpress.com/>): Մինչեւ Նոյեմբեր 13 պլոկը ունեցած է 1100 այցելու: Հարիւրամեակի գործունէութիւնները շատ մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի, Ինսթակրամի եւ կայքին միջոցաւ:

(www.facebook.com/aecollege.lb)

(<https://www.instagram.com/aecollege/>)

(<http://www.aecbeirut.edu.lb/>)



Խորհրդանշաններ

Պարոն Վազգեն Մուղալեանի յղացումով ու գծագրումով եւ օրիորդ Հուրի Քեստենեանի համակարգչային ձեւաորումով եւ իրագործումով ստեղծուեցաւ հարիւրամեակի յատուկ խորհրդանշան, որ կը ներկայացնէ 100 թիւը, ենթախորքին եռագոյնով, որ դէպի յառաջ շարժումի տպաւորութիւն կը ստեղծէ: 100-ին զերօներէն մէկուն մէջ տեղադրուեցաւ դպրոցի խորհրդանշանը, իսկ միւսին մէջ՝ AEC եւ ՀԱԳ տառերը՝ հայկական յաւերժութեան նշանի մէջ ընդելուզուած:

Հայաստանցի մանրանկարիչ Ռուբէն Մալայեան, մեր պատուէրով, յատուկ ՀԱԳ-ի հարիւրամեակին համար պատրաստեց դպրոցի նշանաբան՝ «Ճանաչել զիմաստութիւն...»-ին գեղագիր որմագրը:



Նորոգութիւններ եւ բարեզարդում

Օգոստոս 2023 – Յունիս 2023

Առաւելաբար հարիւրամեակի տօնակատարութիւններուն ի պատրաստութիւն, մեծ թափով եւ ծաւալով նորոգութիւններ ու բարեզարդումներ կատարուեցան դպրոցէն ներս: 2022-ի ամռան ամբողջովին ներկուեցաւ եւ ջրամեկուսացումի ենթարկուեցաւ դպրոցաշէնքը, թէ՛ Մեքսիք փողոցի, թէ՛ Մէյ Զիատէ փողոցի կողմէ: Դպրոցի գլխաւոր հին դարպասը փոխարինուեցաւ ելեկտրաշարժ ինքնագործով մը: Տարիներ լքուած մնալէ ետք, մանկապարտէզի բակը ենթարկուեցաւ հիմնական նորոգութեան եւ բարեզարդումի: Ապրիլ-Մայիս ամիսներուն ծածկուած բակի պատերուն վրան տեղադրուեցան դասանիւթերը խորհրդանշող նկարներ: տարուան սկիզբը գեղազարդուած էին նստարանները: Դպրոցի ներքին մուտքը (գետնայարկը) ամբողջովին ենթարկուեցաւ փոփոխութեան. ցուցատախտակները վերածուեցան յուշատախտակներու, գեղարուեստական լուծումներով ամբողջովին գեղազարդուեցաւ սրահը, որ անուանուեցաւ «Յարգանքի եւ երախտիքի սրահ»:



ԼՈՍ ԱՆՃԵԼՍ



Հարիւրամեակի Լոս Անճելըսի ձեռնարկները կազմակերպելու համար կազմուեցաւ յատուկ մարմին մը ատենապետութեամբ Լեւոն Պապիկեանի (2016-ի շրջ.): Խումբին մաս կը կազմէին նախկին աշակերտ Ժիրայր Ֆրունճեան, Դալար Հայտօսթեան (2016-ի շրջ.), Դալար Գազէզեան (2017-ի շրջ.), Ճորճ Մկրտիչեան (2016-ի շրջ.) եւ Նարեկ Տէրտէրեան (2016-ի շրջ.): Իբրեւ խորհրդատու իրենց որոշ ժամանակ օժանդակեց Թովմաս Տէօքմէճեան (1965-ի շրջ.): Յանձնախումբը ամբողջովին կը վայելէր ԱՀԱ ընկերակցութեան նեցուկը. պրն. Զաւէն Խանճեան անձամբ մօտէն գործակցեցաւ շրջանաւարտներուն հետ:



Սեպտեմբեր 22-ին հոգաբարձութեան ատենապետը, եկեղեցւոյ հովիւը եւ դպրոցի տնօրէնը մեկնեցան Միացեալ Նահանգներ, մասնակցելու համար Լոս Անճելըսի մէջ կազմակերպուած հարիւրամեակի տօնակատարութիւններուն:

Ծրագրուած բոլոր ձեռնարկներն ալ կատարուեցան Sheraton Universal, Universal City պանդոկին մէջ եւ արձանագրեցին բացառիկ յաջողութիւն եւ ունեցան շատ դրական եւ խանդավառ արձագանգ, ըլլայ շրջանաւարտներէն ու նախկին աշակերտներէն, ըլլայ հիւրերէ եւ բարեկամներէ:

Այցելութեան ծիրէն ներս Լիբանանէն մեկնած պատուիրակութիւնը ունեցաւ հանդիպումներ Աւետարանչականի անդամներու հետ՝ ընթրիքի մը ընթացքին, ինչպէս նաեւ այցելեց Հայ աւետ. Մերտինեան վարժարան, ուր ընդհանուր զրոյց ծաւալեցաւ եւ քննարկուեցաւ համագործակցութեան կարելիութիւնը՝ զանազան մարզերէ ներս:

Շրջանաւարտից հաւաք

29 Սեպտեմբեր 2023

Պանդոկին գետնայարկ սրահին մէջ՝ աւագանին շուրջ, երեկոյեան Cheese and Wine-ի ընդունելութեան ներկայ էին աւելի քան 200 հարիւր շրջանաւարտներ, նախկին աշակերտներ եւ կարգ մը հիւրեր ու Աւետարանչականի ներկայացուցիչներ: Գեղեցիկ էր պատկերը դասընկերներու հանդիպումին: Տարբեր նահանգներէ ու երկիրներէ ժամանածներ ալ կային: Բոլորին զգացումները ջերմ էին ոչ միայն իրարու, այլեւ Լիբանանին ու մանաւանդ դպրոցին հանդէպ: Անպաշտօն ելոյթ ունեցաւ տնօրէնը, որ Պէյրութի ողջոյնը փոխանցեց ներկաներուն, իր ուրախութիւնը յայտնեց անոնց ներկայութեան համար եւ խօսեցաւ դպրոցին մասին՝ վեր առնելով անոր նորութիւնները եւ յաջողութիւնները:



Կրթական գրոյցներ

30 Սեպտեմբեր 2023

Շաբաթ առաւօտուն, մօտաւորապէս 50 ներկաներով կայացաւ բազմաձայն գրոյցներու շարք մը, որուն մասնակցեցան տիկնայք Սիւզի Օհանեան (Մերտինեանի տնօրէնուհի), Թամար Թիֆենքճեան (Առաջնորդարանի (անթիլիասական) կրթական համադրող), առցանց՝ դոկտ. Երուանդ Զօրեան (ՀԲԸՄ Հայկ. հեռավար համալսարանի հիմնադիր) եւ ՀԱԳ տնօրէնը: Առաջին գրոյցավարն էր տիկին Օհանեան, երկրորդինը՝ դոկտ. Իւրնէշեան: Զրոյցներուն նիւթերն էին «Հայկական դպրոցներու միջեւ համագործակցութեան հեռանկարներ» եւ «Հայ դպրոցը տաս տարի ետք»:



Կալա-Ճաշկերոյթ 30 Սեպտեմբեր 2023

Շաբաթ, 30 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 6:30-էն սկսեալ հիւրեր սկսան ժամանել պանդոկի ճաշկերոյթի շքեղ սրահը, ուր կը հիւրընկալուէին կազմակերպիչ յանձնախումբին, UAC եկեղեցիէն օգնական երիտասարդներու կողմէ: 240-ի շուրջ հիւրեր ներկայ էին ճաշկերոյթին: Նախորդ օրուան ընկերական ջերմիկ մթնոլորտը կը շարունակուէր նաեւ այստեղ, ուր յատուկ պատրաստուած պաստառին առջեւ կը նկարուէին նախկին դասընկերներ: Սահմանուած ժամուն ԱՄ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներով սկսաւ ճաշկերոյթի պաշտօնական բաժինը, ուր ընդմիջաբար խօսք առին Լեւոն Պապիկեան՝ կազմակերպիչ յանձնախումբին անունով, դոկտ. Արմէն Իւրնէշեան, պարոնայք Զաւէն Խանճեան եւ Ներսէս Պաղոտյեան: Իրենց տեսագրուած պատգամները փոխանցեցին դոկտ. Զաւէն Մսրըլեան եւ դոկտ. Նուպար Աֆէեան (որ անակնկալ այլ պարտաւորութեան մը հետեւանքով չկրցաւ անձամբ ներկայ ըլլալ): Աղօթքները մատուցին վերապատուելիներ Ժիրայր Ղազարեան եւ Սողոմոն Քիլաղպեան (1970-ի շրջ): Յատուկ յուշանուէրներով պատուեցան ՀԱԳ ԱՄՆ Արեւելեան ափի շրջանաւարտից միութեան նախկին ատենապետերը եւ երկարամեայ վաստակի տէր ուսուցիչներ:



Պաշտամունք

1 Հոկտեմբեր 2023

Կիրակի, 1 Հոկտեմբերի առաւօտուն, Հայկական միացեալ ժողովական եկեղեցիի (UACC) պաշտամունքին յատուկ յիշատակութիւն կատարուեցաւ ՀԱԳ-ի մասին: Շատ շրջանաւարտներ եւ հիւրեր ներկայ եղան պաշտամունքին, ուր քարոզեց վեր. Ժ. Ղազարեան. յայտարարութիւնները կատարեց Լեւոն Պապիկեան, իսկ Դալար Հայտօսթեան հոգեւոր երգ երգեց: Պաշտամունքէն ետք բոլոր ներկաներուն համար կազմակերպուած էր ճոխ հիւրասիրութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ, որ վերջին առիթ մըն էր շրջանաւարտներուն իրար տեսնելու:



Ուսուցչական Կազմ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ բաժանմունք



Վարդուկ Ֆռնըզեան (Հայերեն)
Արփի Գույումճեան (Հայերեն, Հայոց պատմութիւն)
Զարմինէ Ասմինեան (Հայերեն, Հայոց պատմութիւն եւ Աշխարհագրութիւն)

ԱՐԱԲԵՐԵՆԻ բաժանմունք



Նա'ամաթ Էլ Խաթիպ
Սոնա Մուղալեան
Մարիա Ռահպանի
Թանիոս Ապտըլլուր (համադրող)

ԱՆԳԼԵՐԵՆԻ բաժանմունք



Նայիրի Նոիրա
Անգինէ Օպէյո (բաժանմունքի համադրող)
Իման Շաապան

ԹՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ բաժանմունք



Մահտի Էլ Հիլլանի (բաժանմունքի համադրող)
Նազիկ Քեչեճեան
Յուլեր Քեչիշեան



Հռութ Եունիսեւ
(Սուրբ Գիրք)



Տիւնիա Նեայմէ
(Փիլիսոփայութիւն)



Լենա Միլեյսերեան
(Ֆրանսերէն)

ԳԻՏԱԿԱՆ բաժանմունք



Նժդեհ Միսեան (բաժանմունքի համադրող, Բնագիտություն)
 Նուարդ Ղորղորեան (Կենսաբանություն, Զինվագիտություն, Գիտություն)
 Լեյլա Տարուհի (Զինվագիտություն)
 Յասմիկ Տեմիրճեան (Գիտություն)



Ռիթա Օհաննեսյան
 (Կենսաբանություն)

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ բաժանմունք



Թալին Չոլագեան (Ընկ./տնտեսագիտություն)
 Հաննա Պշարա (բաժանմունքի համադրող)
 Ռոզ Պուլեյրի

ՄԱՆԿԱԳՈՐԾԷՉ



Մարինա Մկրտիչեան
 Գարուին Անթունեան
 Յասմիկ Թորոսեան (Մանկապարտիզպանուհի)



Վազգեն Մուղալեան
 (Գեղարուեստ)



Պրեթ Ալիսթըր
 (Մարմնամարզ)



Ռիթա Աստիկեան
 (Երաժշտություն)



ԴՈԿՏ. ԶԱԲԵՆ ՄԱՐԻԵԱՆ
Պատուական Տնօրեն

- Շրջանաւարտներու եւ բարերարներու հետ կապի համադրող
- Հայոց պատմութեան ուսուցիչ

Տիկ. ՎԵՐԱ ՀԱԲԱՆՃԵԱՆ
Քարտուղար

Տիկ. ԼԱՐԱ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
Հաշուապահ

Օրդ. ՄԱՐԻՆԷ ՇԵՀԻՐԵԱՆ
100-ամեակի գրասենեակի օգնական եւ
ընկ. հաղ. միջոցներու համակարգող



Հոգատարներ



Նազելի Նիկողեան - Արշո Աւետեան - Մահա Այուպ



Ժողէֆ Քարամ (վարորդ)

ՀՐԱԿ ՄԱՍԻԿՈՒԵԱՆ

Գոհունակ սիրտ
ունենաւ Բաւճիւն
երգանքովս:



ՔԱՐԻՄ ԵՈՒԼԵՍ

To be successful
is to turn your
wishes into choices



ԳԷՈՐԳ ՊԱՍԱՋԱԵԱՆ

Հաջողութիւնը այն անցին
է որ կը Թանջնայ ո՛չ
պարտութիւն եւ ո՛չ ալ
վախ:



ԳՕԳՕ ՄԻՆԱՍԵԱՆ

Հոգաւորիք եւ
սրտաշաճ, Բաշչ
ուզեցիք յարադեւել
ու Բասեւել դէպի
յաջաբանակ:



ՄԱՐԻ ԼՈՒԻԶ
ՊՈՅՄՈՒՇԱՔԵԱՆ

Կեանք Եղան 5
անընդմեջ 24
անգամ 454 5 Խոր
վարդեր որ կարճատև
յուշեր:

Marie Louise



ՄԷՅՐԻ ԻՇԽԱՆՆԵԱՆ

Երբ դուր Ե
գրեցի որի Ե
40 Բացի:

Mezri



ՄՈՒՍԹԱՖԱ ՇԱՆՏԵ

It's amazing how a
little tomorrow can
make up for a whole
lot of yesterday.

Moustafa



ԵՈՒՄԷՅ ԵՈՒՆԵԱՆ

God Does Not
Burden a Soul
Beyond that
it Can Bear.

Younes



ԺԱ. դասարան



Դաստիարակ՝
պր. ՆԺԴԷՀ ՄԽՍԵԱՆ

Ձախեն աջ՝

Մանե Զոլագեան

Նարեկ Քեօշկերեան

Տանա ապու Հժեյլի

Ժ. դասարան



Դաստիարակ՝ տիկ. ՆՈՒԱՐԴ ՂՈՐՀՈՐԵԱՆ

Ձախեն աջ՝ Ա. Շարք – Թիա ապու Հժեյլի, Կրեյս Հալաճեան, Փաթիլ Պետիկեան, Սերլի Հատտատ
Բ. Շարք – Սերլի - Ռոզի Շահինեան, Արին Պաստաճեան, Դալար Տագեսեան,
Մոհամմատ Համմուտ, Քրիստափոր Ալիեմեզեան

Թ. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ԱՐՓԻ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Նոյեմի Ֆրանսիս, Սելին Տրդատեան, Գեորգ Ապաճեան,
Ալիք Կարապետեան, Ալիսիա Գասպարեան

Բ. Շարք – Պետրոս Կիլեքճեան, Վահե Միքայելեան, Անտրիա Տեմիրճեան,
Արտա Գրիգորեան, Ալի Ժապեր

Ը. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ՀՈՒԹԵ ԵՈՒՆԻՍԵՍ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Ալեքս Ճոզիկեան, Իսա Սալիա, Նարեկ Զոլագեան,
Լիանա Սարգիսեան, Նարոտ Գարամանուկեան

Բ. Շարք – Գեորգ Պալեան, Վարդան Աւեսեան, Մարիա Էլմաճեան,
Կարին Ալիմեզեան, Մարիա Պողոսեան, Լիանա Շահինեան

Է. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ՄԱՐԻԱ ՌԱՀՊԱՆԻ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Սագո Էքշեան, Ռազմիկ Ինճեան, Սելին Աստուրեան, Միրա Ղորղորեան, Դրո Էքշեան

Բ. Շարք – Ժուլիա Ֆարսաքուրի, Անտրեա Աբրահամեան, Չոհրապ Թերզեան, Ռոզա-Ռիթա Պարսումեան, Վարդան Մամիկոնեան

2. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ՆԱՄՄԱԹ ԷԼ ԽԱԹԻՊ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Ալիք Ֆերմանեան, Գայիանէ Շէքերճեան, Տարօն Գոճայեան, Հրակ Պալեան, Վահան Աւեսեան

Բ. Շարք – Հրակ Կարապետեան, Կասիա Քէշիշեան, Կապրիէլլա Նոիրա, Մարիա Ճօզիկեան, Հրակ Քէօշկերեան

Ե. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ՅՈՒԼԵՐ ԲԵՇԻՇԵԱՆ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Նարի Բեռզկերեան, Դալար Կիլերքեան,
Կարեն Թերգեան, Պշարա Մուսա

Բ. Շարք – Փերլա Հաւանճեան, Ռաֆայել Ֆրանսիս,
Ճիօվանի Սալպաշեան, Վանի Նորշահեան

Դ. դասարան

Դաստիարակ՝
տիկ. ՆԱՅԻՐԻ ՆՈՀՐԱ



Ձախեն աջ՝

Մարիանա Մուսա

Սերենա Հատտատ

Հրակ Թերգեան

Գ. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ԶԱՐՄԻՆԷ ԱՍՄԻՆԵԱՆ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Կապրիել Գույումճեան, Հուստա ալ Սանտիտ, Արին Ֆերմանեան, Յովնան Ժամկոչեան, Եուզերսիֆ Հալաուի, Էմմանուել Միքայելեան

Բ. Շարք – Սոֆի Նոիրա, Սինթիա Տարաքճեան, Էնճի Աբրահամեան, Դալար Զիրեճեան, Սերենա Գոլանճեան

Բ. դասարան

Դաստիարակ՝ տիկ. ՍՈՆԱ ՄՈՒՂԱԼԵԱՆ



Ձախեն աջ՝ Ա. Շարք – Դանիել Թիւրքիւնճեան, Սերենա Հաւանճեան, Սերլի Շէքերճեան, Կարին Քէշիշեան, Փաթիլ Մամիկոնեան, Ալեքսիա Բանոյեան

Բ. Շարք – Հուրի Տէր Յակոբեան, Հրակ Տէր Յակոբեան, Լիլա Սալպաշեան, Ժուլի Ժապէր



Ա. դասարան

Դաստիարակ՝
օրդ. ՎԱՐԴՈՒԿ ՖՈՆԸՉԵԱՆ

Ձախեն աջ՝

Սառա Սլեյթ
Քրիսթիա Մարիա Նաճարեան
Փաթիլ Թորոսեան
Այիուկ Սլեյթ
Գարմեն Սայիլեան



ԾԱՂԻԿ դասարան

Դաստիարակ՝ օրդ. ՅԱՍՄԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ

Ձախեն աջ՝ Ճոյ ալ Խուրի, Մարիա Սամահա, Միշել Սամահա, Գարինա Թորոսեան,
Կայել Նաճարեան, Գարիլ Բախոյեան, Սերիլ Օհանեան,
Առեն Ղազարեան, Լորեն Սամահա



ԿՈԿՈՆ դասարան

Դաստիարակ՝

օրդ. ՄԱՐԻՆԱ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Ձախեն աջ՝

Ժան Փիեռ Գույումճեան

Դանիել Փօլատեան

Մարք-Վարդան Ղորղորեան

Կայել Թերզեան

Միեր Աւեսեան

Ալի Մաքքե

Սարա Ազգե



ԲՈՂԲՈՋ դասարան

Դաստիարակ՝

տիկ. ԳԱՐՈՒՆ ԱՆԹՈՒՆԵԱՆ

Ձախեն աջ՝

Մունա ալ Սանտիտ

Ճէյսըն ալ Խուրի

Լեա Մարիա Քորթմոսեան

Վահէ Շէքերճեան

Նուրայ Սէյֆըտտին

Երկրորդական բաժնի աշակերտներուն հմտութիւնները զարգացնելու, հայկական թէ լիբանանեան տօները նշելու եւ օգտաշատ զրոյցներ ու դասախօսութիւններ ունենալու նպատակով շաբաթական դրութեամբ կազմակերպուեցան ատենամարզանքներ:

Ատենամարզանքի յանձնախումբի անդամներ են՝ տիկնայք Արփի Գոյումճեան (համադրող), Նուարդ Ղորղորեան եւ պարոն Նժդէհ Միսեան, որոնք տնօրէնին հետ խորհրդակցելով կը պատրաստեն ատենամարզանքներու տարեկան ծրագիրը:

Կը ներկայացնենք 2022 – 2023 տարեշրջանի երկրորդական բաժնի ատենամարզանքներու տեղեկագիրը:

Սեպտեմբեր 30 Գործունէութիւններու ծանօթացում

Տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեան ներկայացուց ակումբներու մասնակցութեան եւ Աշակերտական խորհուրդի օրէնքներն ու մանրամասնութիւնները: Ինչպէս նաեւ առիթ ընծայեց աշակերտներուն այլ ակումբ ունենալու:

Հոկտեմբեր 7 Թարգմանչաց տօն



Տեղի ունեցաւ թարգմանիչներու մասին տեսաերիզի ցուցադրութիւն, Գիրերու գիտին եւ Թարգմանչաց տօնին պատմականի ներկայացում, գեղարուեստական յայտագիր՝ ասմունքներ, նուագ: Տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեան փոխանցեց օրուան պատգամը:

Հոկտեմբեր 14 Արտադասարանային խաղեր

Տեղի ունեցան արտադասարանային խաղեր, կազմակերպուած 10-րդ դասարանի աշակերտներուն կողմէ, առաջնորդութեամբ տիկին Նուարդ Ղորղորեանի:

Հոկտեմբեր 28 Աշակերտական խորհուրդի ընտրութիւն



Աշակերտներու մեծամասնութեան քուէարկութեամբ ԱԽ ընտրուեցաւ 12-րդ դասարանէն Եուսէֆ Եունէսի գլխաւորած խումբը:

Նոյեմբեր 4 Town hall meeting 1

Տնօրէնը ներկայացուց վարժարանիս օրէնքները, ապա աշակերտներուն առիթ տուաւ ազատօրէն արտայայտուելու օրէնքներուն մասին եւ կատարելու առաջարկներ:

Նոյեմբեր 11 «Ճիշդ Հնչենք»

Կազմակերպուեցան «Ճիշդ Հնչենք» եւ “Spelling Bee” մրցումներ՝ առաջնորդութեամբ տիկնայք Անգինէ Օպէյտի եւ Արփի Գոյումճեանի:



Նոյեմբեր 18 Դասախօսութիւն

“Anxiety Management” նիւթով դասախօսութիւն՝ մատուցուած տիկին Ռոզին Մուլալեանի կողմէ:

Նոյեմբեր 25 Town hall meeting 2

«Յարգանք» հասկացութեան մասին զրոյց աշակերտներուն հետ՝ առաջնորդութեամբ տնօրէնին: Տնօրէնը շինիչ օրինակներով բացատրեց, թէ ինչ է յարգանքը՝ առիթ տալով աշակերտներուն ազատօրէն արտայայտելու իրենց տեսակէտները:

Դեկտեմբեր 2 Դասախօսութիւն



“Positive Mindset” նիւթով դասախօսութիւն ներկայացուց արն. Արմէն Պալեան: Աշակերտները լսեցին նաեւ Օգոստոս 4-ի պայտումէն վերապրած եւ դժուարութիւններ յաղթահարած տիկին Միոնայի վկայութիւնները:



Դեկտեմբեր 9

Ասմունքի մրցում

Մասնակցությամբ նաեւ նախակրթարանի աշակերտներուն: Մրցանակ ստացան Գէորգ Պալեան, Սէրլի Ռոզի Շահինեան եւ Հրակ Պալեան:

Դեկտեմբեր 16

Գեղարուեստական յայտագիր

Կոմիտաս Վարդապետի նուիրուած ամբողջական յայտագիր մը կազմակերպած էր «Հայկական ակումբ»-ը՝ առաջնորդութեամբ տիկին Արփի Գոյումճեանի: Աշակերտները ներկայացուցին հանճարեղ վարդապետին կեանքը, երգեցին եւ նուագեցին վաստակաշատ երաժիշտին երգերէն փունջ մը:



Դեկտեմբեր 23

Տօնակատարութիւն

Նոր տարուան տօնակատարութիւն կազմակերպութեամբ 11-րդ դասարանին՝ առաջնորդութեամբ պարոն Նժդէհ Մխսեանի:

Յունուար 23

Town hall meeting 3

«Հանդուրժողականութիւն» նիւթով աշակերտներուն հետ ազատ զրոյց վարեց դոկտ. Արմէն Իւրնէշլեան:

Փետրուար 3

Խրախճանք

Աշակերտական խորհուրդի կազմակերպութեամբ:

Փետրուար 10

Դասախօսութիւն

“Positive Mindset” նիւթով հանդիպում-դասախօսութեան երկրորդ մաս՝ աշակերտներու խնդրանքին ընդառաջելով:

Փետրուար 17

Տօնակատարութիւն

Վարդանանց տօնակատարութիւն «Հայկական ակումբ»-ին կազմակերպութեամբ եւ նախակրթարանի աշակերտներուն երգով ու ասմունքով մասնակցութեամբ: Օրուան պատգամը փոխանցեց տէր Ղեւոնդ քահանայ Լօշխաճեան:



Փետրուար 2

Հանդիպում

Հանդիպում եւ հայկական պարարուեստի արժէքներուն մասին զրոյց Համազգայինի պարարուեստի դպրոցի պարուսոյց օրդ. Ճենի Գոլոյեանի կողմէ:

Մարտ 3

Ներկայացում

«Օգտակար հաղորդակցութեան ծելեր» նիւթը աշակերտներուն ներկայացուց օրդ. Ասրինէ Շեհիրեան:

Մարտ 10

Տօնակատարութիւն

Ուսուցչաց տօն կազմակերպութեամբ 11-րդ դասարանին՝ առաջնորդութեամբ պարոն Նժդէհ Մխսեանի:

Մարտ 24

Խաղեր

Արտադասարանային խաղեր կազմակերպութեամբ 12-րդ դասարանի աշակերտներուն:

Ապրիլ 28

Մեծ եղեռնի ոգեկոչում



«Հայկական ակումբ»ի կազմակերպութեամբ եւ տիկին Արփի Գոյումճեանի առաջնորդութեամբ ու նախակրթարանի աշակերտներուն ալ մասնակցութեամբ՝ ասմունքներով, երգերով եւ նուագներով աշակերտները ոգեկոչեցին Մեծ եղեռնի նահատակներու յիշատակը:

Մայիս 5

Հ.Ա.Գ. 100-ամեակի աշակերտական տօնակատարութիւն

Յայտագիրը սկսաւ առաւօտեան Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով, ապա տեղի ունեցաւ պաշտամունք վերապատուելի Ժիրայր Ղազարեանի



կողմէ: Յայտարարուեցան 100-ամեակի առթիւ աշակերտներուն եռալեզու շարադրութեան մրցումին շահողներուն անունները. հայերէն՝ 6-րդէն Մարիա Զօգիկեան, 9-րդէն Ալիսիա Գասպարեան, 10-րդէն Սէրլի Ռոզի Շահինեան: Արաբերէն՝ 9-րդէն Ալիք Կարապետեան, 12-րդէն Գէորգ Պաստաճեան: Անգլերէն՝ 6-րդէն Կասիա Քէշիշեան, 9-րդէն Ալիսիա Գասպարեան եւ 12-րդէն Գէորգ Պաստաճեան: Տեղի ունեցան արտադասարանային զանազան խաղեր, թուաբանութեան մրցում, դպրոցին մասին զարգացման մրցանք, ձեռնային աշխատանքներ, photo shoot, աշակերտներ մաղթանքներ գրեցին եւ տեղադրեցին այս առիթով պատրաստուած նոնենիին վրայ:

Մայիս 12

Զարգացման մրցում

Կազմակերպութեամբ 8-րդ դասարանին՝ առաջնորդութեամբ տիկին Հռութ Եունիսէսի:

Մայիս 19

Զարգացման մրցում

Կազմակերպութեամբ 11-րդ դասարանին՝ առաջնորդութեամբ պարոն Նժդեհ Մխսեանի:



Մայիս 26

Տարեկան պտոյտ

Վարժարանիս տարեկան պտոյտին աշակերտները իրենց ուսուցիչներուն ընկերակցութեամբ ուղղուեցան դէպի Ֆաքրա, ուր հաճելի օր մը անցուցին բնութեան գիրկը:

Յունիս 2

«Տաղանդներու օր»

Աւանդական «Տաղանդներու օր»-ուան ընթացքին աշակերտներ առաւելաբար նուագով, բայց նաեւ երգով, թատրոնով ու մարմնամարզական ձեւերով ներկայացուցին իրենց շնորհները: Թատերական պատկերը՝ «Կիկոսի մահը» պատրաստած էր պարոն Վազգէն Նուրալեան 5-րդ դասարանի աշակերտներուն հետ:



Նախակրթարանի աշակերտները անհամբերությամբ կը սպասեն Արենամարզանքի պահերուն, որոնք տեղի կ'ունենան Չորեքշաբթի օրերը, վերջին դասապահուն: Դաստիարակ ուսուցիչներու կողմէ կազմակերպուած արենամարզանքներուն մաս կը կազմեն աշակերտները, երգերով, ասմունքով, նուագով եւ ընթերցումներով:

Սյորբու կը ներկայացնենք 2022-2023 կրթական տարեշրջանի Նախակրթարանի արենամարզանքներու ամփոփ տեղեկագիրը, պատրաստուած տիկ. Զարմինէ Ասմինեանի կողմէ:

Սեպտեմբեր 28

Երկու կարելու իրադարձութիւններ

Տիկ. Սոնա Մուղալեան նախ անդրադարձաւ այդ շրջանին պատահած կարելու իրադարձութիւններէն Այաս պարախումբի յաղթանակին, ան ըսաւ. «Մենք պէտք է հպարտանանք Այաս պարախումբի տարած յաղթանակով: Այդ յաղթանակը մեծ նշանակութիւն ունի մեզի՝ լիբանանցիներու համար»: Ապա Էլիզապէթ թագուհին մահուան առիթով՝ Անգլիոյ թագաւորական գերդաստանի մասին տեղեկութիւններ յայտնեց նաեւ պատկերներ ցոյց տուաւ:

Հոկտեմբեր 5

Թարգմանչաց տօն

Հայոց լեզուի ուսուցչուհի օրդ. Վարդուհի Ֆոնըզեանի կողմէ պատրաստուած յայտագիրը գործադրուեցաւ: Նախ. Ա., Բ. եւ Գ. դասարանի աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին արտասանութիւններով, ապա հայոց լեզուին ու Թարգմանչաց տօնին նուիրուած ասմունքներով նաեւ Մեսրոպ Մաշտոցին, գիրերու գիտին եւ ոսկեդարի մասին ընթերցումներով ելոյթ ունեցան նախ. Դ.-Զ. դասարանի աշակերտները: Յայտագրի երկրորդ բաժինը եւ Թարգմանչաց տօնին նուիրուած Powerpoint մը պատրաստած էր Տիկ. Զարմինէ Ասմինեան:

Հոկտեմբեր 12

Տեսերիզներու ակնդրութիւն

Աշակերտները դաստիարակ ուսուցչուհիներու կողմէ ընտրուած հետաքրքրաշարժ տեսերիզները դիտելով սորվեցան, թէ ինչպէս կը շինեն մատիտը, իւղաներկը եւ իրենց սիրած տուրմը: Քանի մը աշակերտներ բեմ բարձրանալով կարկանդակի պատրաստութեան վերաբերեալ բացատրութիւն տուին:

Հոկտեմբեր 19

Երաժշտութեան պատմութիւն

Աշակերտները նախ դիտեցին երաժշտական զանազան գործիքներու մասին տեսերիզներ, սորվեցան նուագարաններու անունները եւ ձելերը: Յայտագրի

վերջաւորութեան մրցումի մասնակցեցան. անոնք տեսնելով գործիքներու պատկերները պէտք է գիտնային՝ անունները:

Հոկտեմբեր 26

Առողջութիւն եւ Մաքրութիւն

Առողջապահութեան եւ մաքրութեան կարելութեան մասին օգտակար ցուցմունքներ եւ բացատրութիւններ տուաւ տիկ. Սիլվա Սայիլեան: Ան աշակերտներուն սորվեցուց թէ ինչպէս պէտք է մաքուր պահեն իրենց մարմինը, ձեռքերը, ակռաները եւ շրջապատը: Աշակերտները ոչ միայն ընդհանուր գիտելիքներով հարստացան նաեւ ստացան իրենց մտահոգող հարցումներուն պատասխանները:

Նոյեմբեր 2

Երկիրներ եւ դրօշակներ

Տիկ. Յուլիա Քէշիշեան խնդրած էր Նախ. 3-րդ եւ 4-րդ դասարանի աշակերտներէն, որպէսզի անոնք Արենամարզանքին իրենց հետ բերեն իրենց սիրած երկիրներու դրօշակները եւ ցուցադրելով՝ տան այդ երկիրներու մասին բացատրութիւններ: Ապա տեղի ունեցաւ խաղ մրցում մը: մեծ թիով երկիրներու դրօշակներ ցոյց տրուեցաւ աշակերտներուն, որպէսզի գուշակեն երկիրներուն անունները: Աշակերտները եռանդով մասնակցեցան խաղին եւ քաջալերեցին յաղթողները:

Նոյեմբեր 11

Թուաբանութեան Մրցում եւ խաղեր

Տիկ. Յուլիա Քէշիշեան Նախակրթարանի բոլոր դասարաններուն համար պատրաստած էր խաղերու ձեւով թուաբանութեան հարցումներ: Աշակերտները ուրախութեամբ մասնակցեցան: Շահողները գնահատուեցան եւ ծափահարութեան արժանացան:

Նոյեմբեր 16

Էլիզապէթ թագուհիին կեանքը

Տիկ. Սոնա Մուղալեան Էլիզապէթ թագուհիին կեանքէն կարելու դրուագներ պատմեց: Յայտագրին իրենց

մասնակցությունը բերին նաեւ խումբ մը աշակերտներ: 4-րդ դասարանէն Սէրէնա Հատտատ թագուհին թագերուն մասին զեկուցեց....:

Նոյեմբեր 23

Լիբանանի Անկախութեան տօն

Նախակրթարանի եւ Երկրորդականի աշակերտները միասնաբար տօնեցին Լիբանանի անկախութիւնը: Նախ. 4-5-6-րդ դասարանի աշակերտները ելոյթ ունեցան Լիբանանի մասին հայերէն արտասանութիւններով, երգով եւ խօսքով:

Դեկտեմբեր 1

Խմբային խաղերու կարեւորութիւնը

Տիկ. Նայիրի Նոհրա եւ օրդ. Վարդուկ Ֆռնըզեան խօսեցան խմբային տարբեր խաղերու մասին: Աշակերտները տեսերիզներով դիտեցին խաղի տեսակներ: Ապա նախ. Ե. եւ Զ. դասարանի աշակերտները միասին խաղեր խաղցան եւ զուարճացան:

Դեկտեմբեր 14

Կաղանդի յատուկ յատագիր

Աշակերտները ուրախ տրամադրութեամբ Կաղանդի երգեր երգեցին, ցուցադրեցին իրենց կատարած ձեռնային աշխատանքները: ապա անգլերէնով քանի մը Կաղանդի մանկական տեսերիզներ դիտեցին եւ տօնական բարձր տրամադրութեամբ տուն վերադարձան:

Դեկտեմբեր 21

Կաղանդի յատագիր

Տիկ. Զարմինէ Ասմինեան յայտագրին սկիզբը ասմունքեց Մուշեղ Իշխանի «Սեղանին շուրջ Կաղանդի» բանաստեղծութիւնը: Ան նաեւ բացատրութիւն տուաւ Նոր տարուան տարբեր տօնակատարութիւններու մասին: Ապա Նախ. 6-րդ դասարանի աշակերտներէն իւրաքանչիւրը խօսեցաւ իր ընտրած երկրին տօնախմբութիւններու մասին:

Դեկտեմբեր 23

Կաղանդի տօնակատարութիւն

Յունուար 11

Կաղանդի տեսերիզներու ակնդրութիւն

Տիկ. Նայիրի Նոհրայի կողմէ ընտրուած տեսերիզներու ընդմէջէն աշակերտները ծանօթացան թէ ինչպէս կը շինեն Կաղանդի ծառերու զանազան զարդեղէններ, գունաւոր լոյսեր, շաքարեղէններ, նուէրի թուղթեր, ինչպէս կրնան գեղեցիկ ձեւով նուէր փաթեթել...:

Յունուար 18

Լեզուական խաղեր եւ մրցումներ

Անգլերէնով լեզուական խաղեր եւ մրցումներ կազմակերպութեամբ տիկ. Նայիրի Նոհրայի:

Յունուար 25

“Mass MEDIA”

Օրուան ատենամարզանքը պատրաստած էր տիկ. Զարմինէ Ասմինեան, նիւթ ունենալով՝ «Լրատուամիջոցներու դրական ու բացասական կողմերը»: Աշակերտները նախ տեսերիզ մը դիտեցին եւ գաղափար ունեցան, թէ ինչ կը նշանակէ «Լրատուամիջոց»: ապա, ուսուցչուհին բացատրեց լրատուամիջոցներու տեսակները, իսկ Նախ. Զ. դասարանի աշակերտները ներկայացուցին անոր դրական ու բացասական կողմերը»:

Փետրուար 22

Բարեկենդանի տօնակատարութիւն

Ամէն տարի աշակերտները անհամբերութեամբ կը սպասեն Բարեկենդանի տօնը: Անոնք օրեր առաջ պատրաստած կ'ըլլան իրենց ծպտուելիք առարկաները եւ տարազները: Աշակերտները ուրախ մթնոլորտի մէջ հիւրասիրուեցան, երաժշտութեան տակ պարեցին, երգեցին, խաղեր խաղցան եւ իրենց տարազները ցուցադրեցին:

Մարտ 1

Պինկօ՝ Թուաբանութեամբ

Այս խաղը պատրաստած էր տիկ. Յուլիա Քէշիշեան: Նախակրթարանի բոլոր աշակերտները մեծ եռանդով մասնակցեցան, «Պինկօ»-ի խաղին, իսկ քանի մը աշակերտներ օգնեցին իրենց ուսուցչուհիին:

Մարտ 8

Ուսուցչաց տօն

Նախակրթարանի աշակերտները խանդավառութեամբ մասնակցեցան յայտագրին: Փոքրերը արտասանութիւններով եւ Նախ. Զ. դասարանի աշակերտները մեծարանքի խօսքերով երախտագիտութիւն յայտնեցին իրենց դաստիարակ ուսուցիչներուն: Օրուան հիւր բանախօսն էր գոլէճի հայերէնի նախկին ուսուցչուհի օրդ. Մաքօ Ունճեան: Յայտագրի աւարտին բոլորը շնորհաւորեցին ուսուցչուհիներուն:

Մարտ 15

Ընթերցանութեան մրցում

Նախ. Ա.-Զ. դասարաններու աշակերտները ընթերցանութեան մրցումի մասնակցեցան: Երեք լեզուներով (հայերէն, արաբերէն եւ անգլերէն) փոքր պարբերութիւններ ընթերցեցին: Լաւագոյն ընթերցողները ծափողջիւններով բարձր գնահատուեցան:

Մարտի 22

Անգլերէնով զարգացման մրցում

Տիկ. Նայիրի Նոիրա նախակրթարանի բոլոր դասարաններու աշակերտներուն համար պատրաստած էր (համացանցէն) ընդհանուր զարգացման մրցում: Բոլորը հերթով մասնակցեցան, սիրեցին եւ ուրախացան:

Մարտի 29

«Կազմակերպութիւն»

Օրուան հիւրն էր ընկերային ծառայող՝ տիկ. Ռիթա Գէորգեան: Ան օրինակներով բացատրեց կազմակերպութեան կարեւորութիւնը: Ան յայտնեց աշակերտներուն, թէ յաջողելու համար պէտք է նպատակ դնել եւ ըլլալ ինքնավստահ: Պէտք է օրուան աշխատանքները ծրագրաւորել աւելի դիւրացնելու համար աշխատանքը:

Ապրիլի 19

«Երկրագունդի օր» (Earth Day)

Տիկ. Նայիրի Նոիրա «Երկրագունդի օր»-ուան (Earth Day) կապակցութեամբ աշակերտներուն բացատրութիւններ տուաւ եւ պատրաստած հարցումները հարցուց. «What is Earth Day», «What means Earth day»: Ան տեսերիզներ եւ Power Point ցոյց տուաւ: Աշակերտները ըմբռնեցին, որ երկրագունդին պէտք է հոգ տանին, մաքուր պահեն, բնութիւնն ու ծառերը պահպանեն...:

Ապրիլի 26

Մեծ Եղեռնի նահատակներու ոգեկոչում

Յայտագիրը պատրաստած էր տիկ. Զարմինէ Ասմինեան: Նախ. Դ. դասարանի աշակերտները ընթերցեցին Ծիծեռնակաբերդի մասին գրութիւն մը: Նախ. Ե. դասարանի աշակերտները «Հայրենիք» խմբային արտասանութիւնը կատարեցին, ապա Նախ. Զ. դասարանի աշակերտները Ապրիլ 24-ի մասին խօսքեր արտասանեցին: Բոլորը ուշադիր եւ յուզուած կը հետեւէին: Ուսուցչուհին նոյնպէս ցուցադրեց Ծիպէլլի Թոչնոց Բոյնին նուիրուած Power Point-ը: Անկէ ետք աշակերտները ներկեցին Մեծ Եղեռնին նուիրուած գծագրութիւն մը եւ տարին իրենց տունները:

Մայիսի 3

Մարզական խաղեր եւ մրցումներ

Նախակրթարանի յատուկ եւ իրենց տարիքին յարմար խաղեր պատրաստած էր տիկ. Նա'ամաթ Խաթիպը: Ան Նախ. Ա.-Զ. դասարանի աշակերտները բաժնեց վեց խումբերու եւ բոլորը խանդավառութեամբ մասնակցեցան խաղերուն:

Մայիսի 10

Տաղանդներու ցուցադրութիւն (Talent Show)

Նախ. Ա.-Զ. դասարանի տաղանդաւոր աշակերտները ելոյթ ունեցան երգով, պարով, նուագով (ջութակ, թաջութակ եւ կիթար, դաշնամուր), գծագրութեամբ եւ ճիմնաստիկով...: Մասնակցողները ծափահարութիւններով գնահատուեցան:

Մայիսի 17 եւ 24

Հետաքրքրաշարժ խաղեր

Տիկ. Յոլեր Քէշիշեան եւ Նախ. Ե. դասարանի աշակերտուհիները միասնաբար կազմակերպած էին զանազան խաղեր (գծագրական, հանելուկային, զարգացման հարցումներ եւ այլն...): Աշակերտներուն բոլորն փափաքին ընդառաջելով յաջորդ շաբաթ եւս շարունակուեցան խաղերը:

Մայիսի 31

Հետաքրքրական տեսերիզի ակնդրութիւն

Աշակերտները դիտեցին վայրի կենդանիներու մասին տեսերիզ մը: Անոնք մօտէն ծանօթացան, թէ ինչպէս անտառներու, ծովերու եւ ովկիանոսներու մէջ վայրի կենդանիներ իրենց ապրուստը կը ճարեն, յաճախ իրար դէմ կը կռուին սնունդ ապահովելու համար: Միեւնոյն ժամանակ աշակերտները գաղափար ունեցան, թէ այդպիսի տեսերիզներ պատրաստելը ինչքան դժուար է եւ ժամանակ կը խլէ:

Յունիսի 7

Վերջին զանգ

Նախ. Զ. դասարանի վերջին զանգը ուրախ եւ յուզումնախառն մթնոլորտ էր: Շրջանաւարտները իրենց դաստիարակ ուսուցչուհի տիկ. Նա'ամաթին հետ գեղեցիկ յայտագիր մը պատրաստած էին: Իւրաքանչիւրը շնորհակալական խօսք արտասանեց դաստիարակ ուսուցչուհիներուն, որոնք սիրով, համբերութեամբ ու ներողամտութեամբ երկար տարիներ դաստիարակած ու գիտելիք ջամբած էին իրենց: Ապա աշակերտները ակնդրեցին տիկ. Նա'ամաթին կողմէ պատրաստուած Զ. դասարանի աշակերտներու վերջին քանի մը տարուան նկարներով տեսերիզը:



Աստուծոյ շնորհքին վստահելով այս տարի եւս ունեցանք Աստուածաշունչի ակումբ, որ ունեցաւ 35 անդամներ: Վարչութիւնը կը բաղկանար հետեւեալներէն.

Արտեմիապետ

Սերլի Ռոզի Շահինեան

Փոխադրվածություն

Արին Պաստաճեան

Խորհրդականներ

Մանէ Զոլագեան, Մերլի Հատտաւո եւ Մէյրի Իշխանեան

Խորհրդատու

Տիպիկն Հռոմեթ ԵռԼնիսԵս

Ունեցանք տարբեր տեսակի գործունեություններ.

- Ա) Պտոյտ դեպի Մնատրա եկեղեցին, ուր աղօթքի պահ ունեցանք:
- Բ) Կիրակի օրերը եկեղեցիէն ետք հանդիպումներ self-esteem + self-worth նիւթերուն շուրջ
- Գ) Տարեկան համագումար ԹՋԱԿ-ի մէջ, ուր վեր. Ժիրայր Ղազարեան պատասխներուն հարցումներուն պատասխանեց համբերութեամբ եւ սիրով, կեդրոնանալով մեր կրօնը գիտնանք, որպէսզի կարենանք քրիստոնաւայել կեանք մը ապրիլ գաղափարին վրայ:
- Դ) Տարբեր առիթներով մասնակցեցանք դպրոցի պաշտամունքներուն ի մասնաւորի երգեցողութեան պահերուն:

Այս գործունեություններով կրցանք զԱստուած փառաբանել եւ նոր սերունդին մէջ Աստուծոյ սերը եւ կրօնքի հանդէպ քննական առողջ մտածում արթնցնել:

Շնորհակալութիւն բոլորին, որոնք աղօթեցին մեր խումբին համար եւ նիւթական օժանդակութիւններով օգնեցին մեր գործունեութիւններուն:

[illegible][illegible][illegible]

Հայկական Ակումբ

ՀԱԳ-ի «Հայկական ակումբ»-ը իր առաջին նիստը ունեցավ 14 Հոկտեմբեր 2022-ին «Լսատեսողական» սրահին մեջ: Առաջին հերթին կատարուեցավ դիւանի ընտրութիւն հետեւեալ ձեւով.

Ատենապետ	Նարեկ Թեօշկերեան (11-րդ դասարան)
Ատենադպիր	Հրակ Մամիկոնեան (12-րդ դասարան)
Գանձապահ	Քրիստափոր Ալեքեզեան (10-րդ դասարան)
Խորհրդատու	Տիկին Արփի Գուլումճեան

2022-2023 տարեշրջանին «Հայկական ակումբ»-ը ունեցավ հետեւեալ գործունէութիւնները.

Ատենամարզանք

- 16 Դեկտեմբեր 2022-ին Կոմիտաս Վարդապետի Նուիրուած յայտագիր – Աշակերտները ներկայացուցին հանճարեղ Կոմիտասը, երգեցին ու նուագեցին վաստակաշատ երգահան Կոմիտասի երգերէն փունջ մը:
- 17 Փետրուար 2023-ին «Վարդանանց Տօն»-ի նշում – Տօնակատարութեան մասնակցեցան նախակրթարանի աշակերտները: Օրուան պատգամը փոխանցեց Հայր Դեւոնդ քահանայ Լօշխաճեան:
- 28 Ապրիլ 2023-ին Եղեռնի ոգեկոչում – Գեղարուեստական յայտագրով աշակերտները ներկայացուցին «Ծիծեռնակաբերդ»ի պատմականը, ասմունքներ, նուագեցին «Ատանայի Ողբը», «Կռունկ գնա», «Ախպերս ու Ես», «Կիլիկիա»:

Այցելութիւններ

8 Մարտ 2023-ին «Հայկական ակումբ»ի անդամները այցելեցին «ԳՈՀԱՐ» գրադարան ու ծանօթացան գրադարանի հիմնադրութեան պատմութեան, արժեքաւոր եւ տեսակաւոր երգարաններու եւ բառարաններու հաւաքածոներուն. դիտեցին ու փորձեցին գիրքեր նորոգելու աշխատանքները: Ապա այցելեցին «Ազդակ» օրաթերթի խմբագրատունը եւ ծանօթացան օրաթերթի պատրաստութեան աշխատանքներուն:

Թատրոն

Ուրբաթ 16 Յունիս 2023-ին «Հայկական ակումբ»ի անդամները դիտեցին Յարութ Գնդունիի բեմադրած «Դուռն Դուռ» թատրոնը:





96-րդ ՀՈՒՆՁՔԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

Շաբաթ, 1 Յուլիսին տեղի ունեցաւ ՀԱԳ-ի 96-րդ հունձքի ամարտական հանդէսը: Երկրորդական բաժնի 8 շրջանաւարտներ եւ նախակրթարանի 10 ընթացաւարտներ ստացան իրենց վկայականները, օրուան խորհուրդին պատշաճող հանդիսութեան մը ընթացքին:

Օրուան պատգամը յղեց դոկտ. Շաղիկ Խիւտավերտեան, որ վեր առնելով հայ դպրոցին դերը՝ անհատական զարգացման եւ ընկերային ծառայութեան մարզերէն ներս, այդ պիտանակէն դիտուած արժեւորեց ՀԱԳ-ի դերակատարութիւնը:

(Խօսքը ամբողջովին https://aec100years.wordpress.com/.../guest-speaker-dr... յղումով)

Գեղարուեստական ելոյթէն, վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք իր «հուսկ բանք»-ը արտասանեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան, որ կեդրոնացաւ «ջանք» բառին վրայ եւ բացատրեց անոր էութիւնը, թելադրելով շրջանաւարտներուն, որ իրենց կեանքին մէջ միշտ ըլլան ջանասեր:

(Խօսքը ամբողջովին https://aec100years.wordpress.com/.../principals-speech... յղումով)

Առ ի շնորհակալութիւն Հայկազեան համալսարանին, հոգաբարձութեան ատենապետ պրն. Ներսէս Պաղտոյեան եւ հովիւր յուշանուէր մը յաճնեցին համալսարանի հոգաբարձութեան փոխատենապետ պրն. Ճոն Սաղըրեանին, որ ստանձնեց այն յանուն վեր. դոկտ. Փօլ Հայտօսթեանի, որ կը բացակայէր երկրէն:

Հովիւին առաքելական օրհնութենէն ետք շրջանաւարտներ ընդունեցին շնորհաւորութիւններ եւ հատեցին տօնական կարկանդակը:

Նշենք, որ ի շարս այլ մրցանակներու, ամարտական դասարանի 3 աշակերտներ՝ Մէլրի Իշխանեան, Հրակ Մամիկոնեան եւ Գէորգ Պաստաճեան ստացան Ռաֆֆի Մանուկեան բացառիկ ընդունակութեան 1000 տոլարի մրցանակները. Հրակ Մամիկոնեան պարգեւատրուեցաւ նաեւ «Տիպար աշակերտ»-ի շքանշանով:





Ուրբաթ, 23 Յունիսին տեղի ունեցավ դպրոցի մանկապարտեզի հանդեսը, որ նուիրուած էր դպրոցի հարիւրամեակին:

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու աշակերտները իրենց երգով ու պարով կրցան ստեղծել այն տպաւորութիւնը, թէ աշխարհ կը տօնէ ՀԱԳ-ի հարիւրամեակը եւ Լիբանանէն, Հայաստանէն, Ռուսիայէն, Իտալիայէն, Նոյնիսկ Ափրիկէէն եկած արուեստագէտներ իրենց տաղանդներով կը տօնակատարեն ՀԱԳ-ի տարեդարձը: Այդ օր ձեռամբ տնօրէնին եւ մանկապարտիզականուիին վկայական ստացան Ծաղիկ դասարանի 9 ընթացաւարտներ:



Ծնողաց Մարմին

Աստուծոյ կամքով եւ առաջնորդութեամբ ՀԱԳ-ի Ծնողաց մարմինը այս տարի եւս կրցաւ դպրոցի տնօրէնութեան հետ գործակցելով յաջողցնել կարգ մը ծրագիրներ:

Ծնողաց մարմինի անդամներն են.

Ատենապետ՝ տիկին Վերա Հատտատ, փոխատենապետ՝ տիկին Ալին Պօղոսեան, գանձապահ՝ տիար Եղիկ Թորոսեան, հաշուապահ՝ տիկին Սիլվա Տաքետեան, ատենադպիր՝ տիկին Հուրի Ղազարեան, խորհրդական անդամներ՝ տիկնայք Կարինէ Զոլագեան, Յասմիկ Աւետեան, Յասմիկ Գոճայեան, Սիլվա Մինասեան, Վանեսա Ֆրանսիս, Սաթենիկ Աբրահամեան եւ տեարք Մինաս Սարգիսեան, Մարտիկ Շէքերճեան

2022-23 տարեշրջանի Ծնողաց մարմինի ծրագիրներն էին.

1. Վերամուտին նախաճաշի հիւրասիրութիւն աշակերտներուն:
2. Ուսուցչաց տօնի նուէր ուսուցչակազմին:
3. Մայիս 11-ին՝ Մայրերու օրուայ առթիւ, նախաճաշ ու բանախօսութիւն մը կազմակերպուեցաւ Մարմինին կողմէ, ուր մանկապարտեզի եւ նախակրթարանի աշակերտները երգերով եւ արտասանութիւններով բաժին բերին: Օրուան դասախօսուիին էր տիկին Քրիստին Արզումանեան, որ խօսեցաւ «Բարօրութիւնը տան մէջ» նիւթով, իսկ պրն. Կարէն Գազանճեան գեղեցիկ երգերով ճոխացուց մթնոլորտը:
4. Ամավերջի հանդէսի հիւրասիրութիւնը եւս, ըստ աւանդութեան, կատարեց Ծնողացը:



Աստուծոյ փառք կու տանք այս գեղեցիկ առիթներուն համար եւ կ'աղօթենք, որ Աստուած առատապէս օրհնէ բոլոր անդամները, որոնք որեւէ ջանք չխնայեցին ծրագիրներու յաջողութեան:

Տիկնանց Օժանդակ Մարմին

2022-23-ին Տիկնանց օժանդակ մարմինը կը բաղկանար հետեւեալ տիկիններէն.

Վերա Հատտատ (ատենապետուի)
Սալբի Գալուստեան
Ալին Պօղոսեան
Վիքի Պապիկեան
Սիլվա Տաքետեան (հաշուապահուի)
Յասմիկ Սիրադեղեան (ատենադպրուի)
Գոհար Գրիգորեան
Քրիստին Տէր Յակոբեան
Շողիկ Պապեան
Շուշան Գալուստեան
Յասմիկ Գոճայեան
Քրիստին Վարդանեան

Տարուան ընթացքին Օժանդակ մարմինը ամէն Երեքշաբթի ծոթինով հաց հիւրասիրեց աշակերտներուն, նուիրատութեամբ՝ Լոս Անճելըսի հայ մայրերու եւ ուսուցիչներու միութեան:

Իսկ տարուան ընթացքին, զանազան տօնական առիթներով, ինչպէս Նոր տարի, Գարնանամուտ, Զատիկ, տարեշրջանի աւարտ եւ այլն, աշակերտներուն հրամցուեցան սենտուիչներ եւ քաղցրաւենիք, նոյնպէս Ամստ 8-ին՝ Ուսուցչաց տօնին, տեղի ունեցաւ անուշեղէնի հիւրասիրութիւն ուսուցչակազմին:

Օժանդակ մարմինը եւ Ծնողացը միասնաբար ապահովեցին Վկայականաց բաշխման հանդիսութեան հիւրասիրութիւնը եւ սրահի յարդարումը:

ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբը կը բաղկանայ հետեւեալ տիկիններէն.

Ռուպինա Արթինեան (ատենապետ)
 Անրալ Մխսեան (քարտուղար)
 Սիլվա Տաքսեան
 Լիլա Արթինեան
 Փաթիլ Խտրլարեան
 Արուս Լեպլեպճեան

2022-23-ին Տիկնանց ընկերային յանձնախումբը վերսկսաւ իր գործունէութիւններուն, կազմակերպելով երկու պտոյտներ դէպի Լիբանանի տեսարժան վայրերը:

29 Հոկտեմբերի շրջագայութեան ուղղութիւնը դէպի Պաթրուն էր: Ասանակիցները այցելեցին Էտտէի Սուրբ Աստուածածին եւ Ապֆուքի Ս. Էլիժ եկեղեցիները եւ Ասսիայի մէջ գտնուող Հաննայի բրուտագործարանը: Պտոյտին մասնակցեցան 50 հոգի:


Քաջալերուած նախորդ պտոյտին գտած մեծ ընդունելութենէն, 29 Ապրիլին ՀԱԳ-ի 240 բարեկամներով լեցուն 5 հանրակառքեր ուղղուեցան դէպի Լիբանանի հարաւը: Ասանակիցները այցելեցին Քարիսայի Ս. Յովհաննէս Մկրտիչ ու Ժեզգիւնի Ս. Աստուածածին եկեղեցիները, Ֆարիտ Սրիալի թանգարան-պալատը, շրջագայեցան Ժըզգիւնի մէջ այցելելով նշանաւոր ջրվէժը:

Զոյգ պտոյտներուն բոլոր մասնակիցները մեծապէս գնահատեցին յանձնախումբի վերաշխուժացումը եւ պատրաստակամութիւն յայտնեցին քաջալերելու անոր հետագայ ծրագիրները, որոնք բոլորն ալ մանրամասնօրէն ծրագրուած ու բժախնդրօրէն գործադրուած կ'ըլլան յանձնախումբին կողմէ:





ՀԱԳ



Հաթերք

2022 Սեպտեմբերին Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման ուղղուած զուգընթաց քայլերու շնորհիւ Արցախի Մարտակերտ շրջանի Հաթերք գիւղի միջնակարգ դպրոցն ու Հայ Աւետարանական Գոլէճը ԶՈՅՐ ԴՊՐՈՑՆԵՐ հռչակուեցան:

Արցախի շրջափակումի առաջին օրերուն, անսալով տնօրէնութեան կոչին, ծնողներ, ուսուցիչներ եւ հոգաբարձուներ գոյացուցին 1800 ամերիկեան տոլար, որ ղրկուեցաւ Հայաստանի մէջ Աւետարանականի գրասենեակին, յօժանդակութիւն Հաթերքի դպրոցին: Սակայն կարելի չեղաւ այն փոխանցել: Հաւաքուած գումարը այժմ կը գործածուի Արցախէն տեղականուածներու օժանդակութեան ծրագիրներուն:

Աշխատանիստ



Շաբաթ, 24 Սեպտեմբերին ՀԱԳ-ի ուսուցչակազմն ու պաշտօնէութիւնը ներկայ եղան օգտաշատ աշխատանիստի մը, որ վարեց Հայկազեան Համալսարանի դասախօս դոկտ. Զրիստին Արզումանեան-Ղազարեան: Դոկտ. Արզումանեան, որ նաեւ հիմնադիրն է Wellness at Work հաստատութեան, խօսեցաւ դպրոցէն ներս ու գործակիցներու հետ առողջ եւ ուրախ տրամադրութիւն ստեղծելու մասին, աշխատանքի արդիւնաւետութիւնը եւ անկէ ստացուած գոհունակութիւնը բարձրացնելու համար:



Աշխատանիստ

Հոկտեմբեր 10 - 14 ՀԱԳ-ի ուսուցչուհիներ տիկին Ջարմինե Ասմինեան եւ տիկին Արփի Գույումճեան մասնակցեցան Հայկազեան Համալսարանի եւ Հայաստանի Փարատիկմա կրթական հիմնադրամին կազմակերպած աշխատանիստերուն՝ նուիրուած Հայոց Պատմութեան դասաւանդման արդիական ծելերու:



Մանկապարտեզի բակ

Առաջ



Հիմա



Օր մը բնութեան մէջ



Կիրակի, Մարտ 12-ին, Լիբանանի մեջ գործող հայ աւետարանական վարժարաններու 6 այլ ուսուցիչներու կողքին, ՀԱԳ-ի երեք ուսուցիչներ՝ պարոն Հաննա Պշարա եւ տիկնայք Նա'ամաթ Էլ Խաթիպ եւ Սոնա Մուղալեան ՄԱՀԱԵՄ Կրթական խորհուրդին կողմէ շքադրուեցան «երկարամեայ ծառայութեան» ոսկեայ մետալով: ՀԱԳ-էն յայտագիրին մաս կազմեցին 12-րդ դասարանի շնորհալի աշակերտ Հրակ Մամիկոնեան, որ ասմունքեց Վահան Թեքէեանի «Հաշուեյարդար»-ը եւ պր. Հ. Պշարա, որ արաբերէնով ներկայացուց պարգեւատրուած ուսուցիչներու շնորհակալական ուղերձը:



Միմ թանգարան



Բարեկենդան



Չափիկ



Ժամանցի հաճելի պահ մը
Parcours des saveurs-ի մէջ

Հայ աւետարանական գոլէճի 100-րդ տարին կը փակենք տօնական տրամադրութեամբ: Յաւիտենական փառք Աստուծոյ, որ հարիւրամեակի մեր ծրագրած բոլոր ձեռնարկներն ալ պսակուեցան կատարեալ յաջողութեամբ եւ վկան դարձանք Աստուծոյ սիրոյն ու մեր բարեկամներու քաջալերանքին: Կրթական տարին նոյնպէս բնականոն ընթացաւ, հակառակ երկրաշարժներու հետեւանքներուն՝ քարէն աւելի՝ հոգիներէ ներս, երկրէն ներս շարունակուող ընկերատնտեսական տագնապին, քաղաքական անորոշութեան եւ մասամբ նոցին:

ՎԵՐԱՄՈՒՏ

2022-2023 տարեշրջանը սկսաւ 22 Սեպտեմբեր 2022-ին եւ պաշտօնապէս աւարտեցաւ 26 Յունիս 2023-ին: Տարեշրջանին ընթացքին ունեցանք 155 դասաւանդութեան եւ քննութեանց օրեր: 43 օր դպրոցը փակուեցաւ արձակուրդի, քննութեանց միջեւ դադարի եւ երկրաշարժի պատճառով:

ԱՇԽԱՏԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻՒ

Աշակերտութեան թիւը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Բաժին	Աշակերտութիւն	Դասարաններ
Աննկապարտէզ	21	3
Նախակրթարան	46	6
Միջնակարգ	30	3
Երկրորդական	20	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	117	15

Ունեցանք 25 ոչ-հայ աշակերտներ, հետեւեալ դասարաններուն մէջ. Աննկապարտէզ (9 հոգի), Նախակրթարան (7 հոգի), միջնակարգ-երկրորդական (9 հոգի): Աստուծոյ 18-ը կանոնաւորաբար, իսկ 3-ը մասամբ կը հետեւին հայերէնաւանդ դասերուն:

Տարեշրջանի կիսուն երկու աշակերտ (եղբայրներ) գաղթեցին Գանատա:

Աշակերտութեան աշխարհագրական բաժանումը ունէր հետեւեալ պատկերը.

Շրջան	թիւ	համեմատութիւն
Պէյրութ կեդրոն եւ արեւմտ. արուարձաններ	29	24.78%
Աշրաֆիէ եւ Ասր Մխայէլ	5	4.27%
Պուրճ Համուտ, Տքուանէ	28	23.93%
Տորա, Հանքաշ, Ամանոս, Պաուշրիէ, Ֆանար	30	25.64%
Ժտէյտէ, Զալքա, Անթիլիաս, Պսալիմ, Ազիէր, Ռապուէ	12	10.26%
Տպայլէ, Նաքքաշ	5	4.27%
Անսուրիէ, Այն Սաատէ	5	4.27%
Այն էլ Ռամանէ, Շիահ	3	2.57%

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԸՆԴՀ. ՊԱՇՏՏՈՒԹԻՒՆ

Դպրոցի ուսուցչակազմի եւ պաշտօնէութեան միջին տարիքը 49-ն է. միջին ընդհ. փորձառութիւնը՝ 24 տարի: Ամբողջ անձնակազմի 79%-ը կը պատկանի իգական սեռին, 21%-ը՝ արական:

Բնոյթ	
Վարչական պաշտօնէութիւն	5
Դռնապան, տնտես, մաքրող	4
Վարորդ	5
Մնայուն ուսուցիչներ	16
Այցելու ուսուցիչներ	14
ԸՆԴՀԱՆՈՒՐ	44

Ազգութիւն	
Հայ	31
Արաբ	11
Այլ	2

Ուսց./պաշտ. ակադ. աստիճաններ	
PhD 2 MA, MS, Maitrise, BA+TD	13
BA, BS, License	15
Աննկաւարժական/վարչական որակաւորում	3
Այլ	2

Ուսց./պաշտ. փորձառութիւն ըստ տարիներու	Ընդհանուր	ՀԱԳ-էն ներս
- 5 տարի	4	9
5 – 10 տարի	0	2
11 – 15 տարի	2	9
16 – 20 տարի	7	5
21 – 25 տարի	6	3
26 – 30 տարի	6	3
31 – 35 տարի	7	3
41 – 45 տարի	2	
46 – 50 տարի		
60+	1	1

Տարուան աւարտին աշխատանքէ դադրեցուցաւ այս տարի պաշտօնակոչուած օրդ. Իման Շաապանը: Ուսուցչական կազմի ժողովները եղան թէ ընդհանուր, թէփոքր խումբերով եւ անհատական հանդիպումներով: Ունեցանք երկու ընդհանուր ծնողական ժողովներ եւ անհատական հանդիպումներ: Ուսուցչաց խորհուրդը գումարեց ամսական ընդհանուր ժողովներ, որոնց ընթացքին առնուեցան կրթական կեանքի ու դրուածքի առնչուող կարեւոր որոշումներ:

Կիրակի, Ապրիլ 12-ին, Լիբանանի մէջ գործող հայ աւետարանական վարժարաններու 6 այլ ուսուցիչներու կողմէն, ՀԱԳ-ի երեք ուսուցիչներ՝ պարոն Հաննա Պշարա եւ տիկնայք Նա'ամաթ Էլ Խաթիպ եւ Սոնա Մուլալեան ՄԱՀԱԵՄ Կրթական խորհուրդին կողմէ շքադրուեցան «երկարամեայ ծառայութեան» ոսկեայ մետալով:

Հայագիտական նիւթեր աւանդող ուսուցիչներ մասնակցեցան երկու սեմինարներու, մին՝ հայաստանեան Փարատիկմա կազմակերպութեան կողմէ (կազմակերպիչ՝ Հայկազեան համալսարան), միւսը մանկավարժութեան դոկտոր Անքը Էլ Պաթայնէի կողմէ (կազմակերպիչ՝ ՀԲԸՄ-ի վարժարաններ): Ամբողջ ուսուցչակազմը տարեկիզբին մասնակցեցաւ դպրոցին կազմակերպած սեմինարին, որ վարեց դոկտ. Քրիստին Արզումանեան, «աշխատավայրի մէջ բարօրութիւն» նիւթով:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի հիմնական առաքելութեան հետամուտ՝ ունեցանք կանոնաւոր առաւօտեան պաշտամունքներ՝ նախակրթարան եւ մանկապարտէզ՝ երկուքական օր, եւ միացեալ՝ մէկ օր պարբերականութեամբ: Անկապարտէզը նոյնպէս ունեցաւ իր ամէնօրեայ պաշտամունքները: Պաշտամունքները վարեց տիկին Հռութ Եունիսէս: Ունեցանք նաեւ հիւր պատգամաբերներ: Վերսկսան նաեւ կիրակնօրեայ աշակերտական պաշտամունքները, որոնց ներկայ եղան երկրորդական բաժնի հայ աշակերտները: Ասոնց մէջ յատուկ էին վերամուտի եւ շրջանաւարտից գոհաբանական պաշտամունքները: Հոգեւոր աճման համար շարունակուեցան Սուրբ գիրքի դասաւանդութիւնները. արժանի է նշել թէ միջնակարգ-երկրորդական բաժնի աշակերտներուն մեծ մասը մասնակցեցաւ ՀԱԱ եկեղեցւոյ Պատանեաց շարժումին (ներառեալ ոչ-քրիստոնէայ արաբ աշակերտներ). գործեց Աստուածաշունչի ակումբը: Եկեղեցւոյ հովիւը մօտէն հետեւեցաւ աշակերտներուն, 11-12-րդ դասարաններուն մէջ ալ վարելով բարոյագիտական բնոյթի աշխատանքներ:

ԱՇԽԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակադեմական

2023 Ապրիլ-Մայիսին 9-րդի եւ 12-րդի աշակերտները մասնակցեցան հայ աւետ. վարժարաններու միացեալ փորձընթերցումներուն: Երեք բաժանմունքներուն մէջ ալ լաւագոյն եռեակին մէջ ունէինք երկուքական աշակերտ:

Պրէզիդէնտի պետական քննութիւնները ջնջուած ըլլալով, Յուլիս 10 – 13-ին միայն 12-րդ դասարանի աշակերտները մասնակցեցան պաքալորեայի պետական քննութիւններուն (3 հոգի Ընկ.-տնտ. բաժին, 3 հոգի՝ կենսաբ.), արժանագրելով 100 առ 100 պատուաբեր յաջողութիւն: Պաքալորեայի 6 աշակերտներէն 2 հոգի «շատ լաւ» եւ 1 հոգի «լաւ» յիշատակութեամբ յաջողեցան քննութեան: Սա ՀԱԳ-ի պաքալորեայի 100% յաջողութեան անընդմէջ 5-րդ տարին է:

Արտադասարանային եւ արտադպրոցական

Վերսկսան գործել Սուրբ գիրքի (պատասխանատու՝ տիկին Հռութ Եունիսէս) եւ Հայկական (պատասխանատու՝ տիկին Արփի Գոյումճեան) ակումբները, որոնք ունեցան զանազան գործունէութիւններ: Տեղեկագիրները տեսնել համապատասխան բաժնին մէջ:

Կարգ մը աշակերտներ մասնակցեցան նկարչական, շարադրական եւ ասմունքի մրցանքներու: Մրցանակներու տիրացան 9-րդ դասարանի աշակերտուհի Սէրլի-Ռոզի Շահինեան (շարադրական) եւ 11-րդ դասարանի աշակերտ Հրակ Մամիկոնեան (ասմունքի):

Նախակրթարանի եւ երկրորդականի ատենամարզանքներուն ընթացքին (պատասխանատուներ տիկնայք Արփի Գոյումճեան եւ Զարմինէ Ասմինեան) կազմակերպուեցան ընկերային, մշակութային, դաստիարակչական բնոյթի գործունէութիւններ, նշուեցան զանազան տօնական առիթներ, ինչպէս նաեւ կազմակերպուեցան բազմաբնոյթ խաղեր եւ մրցումներ:

Երկրորդականի եւ նախակրթարանի վերին կարգերը մասնակցեցան Հայկազեան համալսարանի Կարմիր խաչի խմբակի կազմակերպած վարժանիստերուն: Աշակերտներ մասնակցեցան նաեւ Art Therapy-ի աշխատանիստերու (պատասխանատուներ՝ արուեստագէտներ Լենա Քելեկեան եւ ամուսինը՝ Յակոբ Սիւլահեան (1978-ի շրջ.), Կարպետագործութեան (կազմ. Հայկազեան համալսարան), ազգային-դաստիարակչական (կազմ. ՀԵՀՈՄ) եւ այլ աշխատանիստերու եւ համագումարներու: Երեք աշակերտ մասնակցեցան Հայկազեանի կազմակերպած MUN-ին: Եղան նաեւ մասնակցութիւններ աշակերտական մրցանքներու, որոնց ընթացքին կարգ մը աշակերտներ արժանացան մրցանակներու (գծագրութեան՝ Սերենա Գոլանճեան, մեքենագրութեան եւ շարադրութեան՝ Սէրլի-Ռոզի Շահինեան, եւ այլք):

5-րդէն 11-րդի աշակերտներ այցելեցին հանքային քարերու եւ բրածոներու թանգարան, կազմակերպուեցան զանազան պտոյտներ, որոնց մէջ յիշարժան եղաւ համադպրոցական զբոսախնճոյքի օրը Ֆաքրա շրջանին մէջ:

Աշակերտական խորհուրդ

Դժբախտաբար այս տարի Աշակերտական խորհուրդի կազմը չունեցաւ աշխոյժ գործունէութիւն, հակառակ աշակերտներու մեծամասնութեան կողմէ

ընտրուած ըլլալուն: Նկատի առնելով, որ նման պարագայ նախատեսուած չէր ու կանոնադրութիւնը չունէր համապատասխան յօդուած, աշակերտական գործունէութիւնները ստանձնեցին անհատ աշակերտներ, յատկապէս Մէյրի Իշխանեան եւ Միւստաֆա Շիատէ, որոնք կազմակերպեցին զանազան ընկերային հաւաքներ:

ՕԺԱՆՂԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ յանձնախումբը իր գործունէութիւնը շարունակեց առաւելաբար ծառայելով քաֆէթերիայէն ներս: Յատկանշական էր կամաւոր ծառայութիւնը, ոչ միայն այժմու ծնողներու, այլեւ նախկիններու եւ նոյնիսկ՝ տիկիներուն բարեկամներուն ու դրացիներուն: Օժանդակ յանձնախումբը կազմակերպեց նաեւ աշակերտական հիւրասիրութիւններ՝ զանազան տօնական առիթներու եւ Լոս Անճելէսի հայ տիկիներու եւ մայրերու յանձնախումբին աջակցութեամբ ամէն երեք-չարթի ձրիաբար նախաճաշ հրամցուց բոլոր աշակերտներուն:

Տիկնանց ընկերային յանձնախումբը կազմակերպեց երկու պտոյտ դէպի Պաթրոն (29 Հոկտեմբեր) եւ դէպի Ժըզզին (29 Ապրիլ): Զոյգ պտոյտներուն մասնակիցներուն թիւը մօտաւորապէս 300 հոգի է:

Ծնողաց մարմինը 11 Մայիսին կազմակերպեց իր անդական նախաճաշ-դասախօսութիւնը եւ Ամալերջի հանդէսի հիւրասիրութիւնը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ տարեշրջանին առցանց լոյս տեսան «Լրատու»-ի երեք թիւեր (ԻԴ. տարի թիւ 1, 2, 3): «Սիփան» տարեգիրքը (2021 եւ 2022 միացեալ համար) նոյնպէս լոյս տեսաւ առցանց: ՀԱԳ հարիւրամեակի մատենաշարով լոյս տեսաւ դոկտ. Անըրլեանի «Ապրող էջեր անցեալէն» գիրքը, ինչպէս նաեւ ՀԱԳ-ի հիմնումի մասին պատմող դոկտ. Յուսիկ Տօնապետեանի եւ Պետրոս Քարծայրի նուիրուած գրքոյկներ:

Սկսաւ գործել դպրոցի պոլկը, ուր մինչեւ Յուլիսի աւարտը տեղադրուեցան դպրոցի մասին 11 բանախօսութիւններ, յօդուածներ, յուշեր եւ վկայութիւններ (<https://aec100years.wordpress.com/>): Մինչեւ Յուլիս 14 Պոլկը ունեցած էր 800 այցելու:

Դպրոցի գործունէութիւնները շատ մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի (www.facebook.com/aecollege.lb), ինսթակրամի (<https://www.instagram.com/aecollege/>) եւ կայքին (<http://www.aecbeirut.edu.lb/>) միջոցաւ: Այս տարի օրիորդ Աարինէ Շէհիրեան եւ տիկին Հուրի Ղազարեան ստանձնեցին համապատասխանաբար ընկ. հաղորդակցական միջոցներուն եւ կայքին թարմացումը: Դպրոցի Ֆեյսպուքի էջին վրայ Սեպտ. 2022 – Յուլիս 2023 եղած է 97 տեղադրում, որոնք հասանելի եղած են ընդհանուր 256,610 հոգիի: Ամենամեծ լսարանը ունե-

ցած է Յունիս 11-ի յօբելէնական հանդիսութեան նկարներու էջը՝ 37,049 (14/06/23) դիտում եւ յունիսեան ձեռնարկներուն մեր ծանուցումը՝ 15,543 դիտում (2/06/23): Ինսթակրամը ունեցած է 53 տեղադրում եւ հասանելի եղած է ընդհանուր 28,809 անձի:

ՎԿԱՅԱԿԱՆՑ ԲԱԾՆՈՒՄ

23 Յունիսին, գեղեցիկ հանդէսի մը ընթացքին, Ծաղիկ դասարանէն վկայուեցան 9 աշակերտներ, իսկ Յուլիս 1-ին իրենց վկայականները ստացան 10 ընթացաւարտներ (6-րդ դասարան) եւ 8 շրջանաւարտներ (12-րդ դասարան):

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄ

Առաւելաբար հարիւրամեակի տօնակատարութիւններուն ի պատրաստութիւն, մեծ թափով եւ ծաւալով նորոգութիւններ ու բարեզարդումներ կատարուեցան դպրոցէն ներս:

2022-ի ամրան ամբողջովին ներկուեցաւ եւ ջրամեկուսացումի ենթարկուեցաւ դպրոցաշէնքը, թէ՛ Մեքսիք փողոցի, թէ՛ Մէյ Զիատէ փողոցի կողմէ: Դպրոցի գլխաւոր հին դարպասը փոխարինուեցաւ ելեկտրաշարժ ինքնագործ դարպասով: Նոյնպէս, տարիներ լքուած մնալէ ետք, մանկապարտէզի բակը նոյնպէս ենթարկուեցաւ արմատական նորոգութեան եւ բարեզարդումի:

Ապրիլ-Մայիս ամիսներուն ծածկուած բակի պատերուն վրան տեղադրուեցան դասանիւթերը խորհրդանշող նկարներ եւ գեղազարդուեցան նստարանները: Դպրոցի ներքին մուտքը (գետնայարկը) ամբողջովին ենթարկուեցաւ փոփոխութեան. ցուցատախտակները վերածուեցան յուշատախտակներու, գեղարուեստական լուծումներով ամբողջովին գեղազարդուեցաւ սրահը, որ անուանուեցաւ «Յարգանքի եւ երախտիքի սրահ»:

ՄԱՀԱԵՄ-ի ջանքերով եւ ԱՀԱԸ-ի օժանդակութեամբ դպրոցը, ի շարս այլ հայ աւետ. կառոյցներու, օժտուեցաւ ելեկտրաձիւն արեգակնային վահանակներով:

ԿՐԹԱՆՂԱՍՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամալարկը, բացի աշակերտներէն զանձուած գումարներէն, առաւելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատուութիւններով:

Երկրին տնտեսական ահաւոր տագնապին ու աննախադէպ սղաճին պատճառով՝ իբրեւ բացառիկ կարգադրութիւն, ՄԱՀԱԵ միութեան կոչին ընդառաջելով այս տարի աշակերտներէն զանձուեցաւ միայն 1,500,000 լ.ո. կրթաթոշակ, աշակերտական փոխադրավարձքի վրայ հաստատուեցաւ գրեթէ 33 առ հարիւր գեղջ, թերեւցնելու համար վառելանիւթի սղութեան հետեւանքով մեծ համեմատութիւններու հասած փոխադրութեան ծախսերը: Այսպիսով դպրոցին ամալարկին

միայն **6 առ հարիւրը** գոյացաւ աշակերտական գանձումներէ: Մնացեալը նուիրատուութիւններ եւ յատկացումներ են:

Ուսուցիչներու ամսականներու արժեզրկումը թեթեւեցելու նպատակով հոգաբարձութիւնը նախ 100 (Հոկտ. – Դեկտ), ապա 150 (Յուն. – Փետր. ամիսներ) ապա 200 տողարի (Մարտ – Սեպտեմբեր ամիսներ) յատուկ յատկացում կատարեց ուսուցիչներուն: Նոյն նպատակով Հայաստան համահայկական հիմնադրամն ալ 16,000 տողարի յատկացում կատարեց:

Դպրոցին իրենց տարեկան յատկացումները շարունակեցին տրամադրել Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Ստեփան Փիլիպոսեան հիմնադրամը, տեարք Ռաֆֆի Անուկեանը, Հրաչ Սիսեռեանը, Ալպեռ Պեզճեանը, տորթ. Նազարէթ Տարաքճեանը, Սթամպուլի եւ Հերմէզ ամուլները, ՄԱՀԱԵՄ-ի միջոցով Cedre եւ HEKS կազմակերպութիւնները եւ ուրիշներ: Շնորհակալութիւն բոլորին:

Դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ

կը կատարուին տարեկան յատկացումներ: ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ Աւետ. Ա. Եկեղեցի), նախկին աշակերտ բարերար տիար Ռաֆֆի Անուկեանի յատկացում, նախկին աշակերտ բարերար Հրաչ Սիսեռեանի յատկացում ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի, Ալպեռ Պեզճեան, շրջանաւարտ տորթ. Նազարէթ Տարաքճեան, ՀԲԸՄ Զ. Անըրլեան մրցանակ, նախկին աշակերտ տիար Սարգիս Սիմիթեան, Բիզանդ. եւ Սարգիս Հասըրճեան հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Անըրլեան Կրթական Հիմնադրամ, Կարապետ Զոլագեան, Եղիսաբէթ Ծանծիկեան, Ասատուր Կիւլեսերեան, Մարի Կեօքկեօզեան, Դանիէլ Շնորհոքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, տորթ. Բաբգէն Մկրտիչեան, Անահիտ Կիւլեսերեան, Մարիամ Քաթմերեան, Էօթէն եւ Նազելի Էքմէքճի, տորթ. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտէ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Անուկեան, Պատրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան, Աւետիս եւ Նորա Մենեշեան հիմնադրամները եւ տորթ. Ճորճ Էքմէքճի առողջապահական ֆոնտը:

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր բարերար անհատներու եւ կազմակերպութիւններուն, Հայկազեան համալսարանին ու այն բոլոր մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք փարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան դպրոցի աշխատանքներուն, նպաստելով անոր հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին: Յատուկ շնորհակալութիւն Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ խնամակալութեան, ՀԱԳ-ի հոգաբարձութեան, պապուակալ փնօրէնին, Ծնողաց, Տիկնանց օժանդակ եւ Տիկնանց ընկերային մարմիններուն, գործակից ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն, Հայկազեան համալսարանին, Հայ աւետ. հրապարակչական գրասենեակին ու Տպարան Քեսրենեանին:



ՀԱՅ ԱՐԵՎԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԵՃ

Սեփականություն ՀԱՅ ԱՐԵՏ. Ա. ԵԿԵՂԵՑԻԻ
Մեքսիք փողոց, Պեյրուզ - Լիբանան

ՀԱԳ Հոգաբարձության կազմը 2022 - 2023 տարեշրջան

Վեր. Ժիրայր Ղազարեան (նախագահ)
Պր. Ներսես Պաղտոյեան (ատենապետ)
Պր. Յակոբ Տեմիրճեան (փոխատենապետ)
Պր. Զրաչ Զասըրճեան (գանձապահ)
Պր. Ճոնի Սայիլեան (խորհրդական)



Զախեն աջ՝ Ճոնի Սայիլեան, Զրաչ Զասըրճեան, Ներսես Պաղտոյեան,
վեր. Ժիրայր Ղազարեան, իսկ. Արմեն Իրնեշլեան, Յակոբ Տեմիրճեան

ARMENIAN EVANG. COLLEGE
Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية
شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

